ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2(72), 31 մարտ, 2025թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԳՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ

Մարտի 10-ին ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մանուկ Մուրադյանը հանդիպել է նորաստեղծ ուսումնական հաստատության՝ հարցազրույցի փուլը հաջողությամբ հաղթահարած և նոր հաստիքացուցակով նախատեսված վարչական, ուսումնաօժանդակ և պրոֆեսորադասախոսական հաստիքները համալրած ծառայողների ու աշխատակիցների հետ: Մ. Մուրադյանն անձնակազմին է ներկայացրել կրթահամալիրի նորանշանակ պրոռեկտորներ Մ. Մարկոսյանին, Ա. Սուքիասյանին, Է. Մարգարյանին և Ա. Հայրապետյանին, ինչպես նաև վերջիններիս համակարգմանը վերապահված աշխատանքների ուղղությունները:

ՆԳՆ կրթահամալիրի ձևավորման կապակցությամբ շնորհավորելով ներկաներին՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարն իր խոսքում ընդգծել է բուհի առաքելությունն ու արժեքները, հիշեցրել հիմնական նպատակները, մասնավորապես՝ հանրային անվտանգության ոլորտում, այդ թվում՝ ոստիկանական և փրկարարական կրթությամբ մասնագետների պատրաստումը, ոստիկանության և փրկարար ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստումն ու ՆԳՆ կարիքների համար համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձանց վերապատրաստումը:

Մ. Մուրադյանը նշել է հասարակության մեջ կրթահամալիրի կրթական և գիտական գործունեության դերն ու կարևորել զբաղեցրած պաշտոններում անձնակազմի յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունն ու կարգապահությունը: Այնուհետև անդրադարձել է հիմնական մարտահրավերներին, այդ թվում՝ ներկայիս կրթական և գիտական, ենթակառուցվածքների, միջազգային համագործակցության խնդիրներին, ուսանողների ակնկալիքներին ու կրթության որակի բարձրացման անհրաժեշտությանը: Կրթահամալիրի զարգացման տեսանկյունից կարևորվել են նաև կրթական նորարարություններն ու գիտահետազոտական առաջընթացը, ակադեմիական ազատությունն ու կառավարման արդյունավետության բարձրացումը:

Ի թիվս այլ հարցադրումների՝ համագործակցության և հետադարձ կապի ապահովման նպատակով ընդգծվել է պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության խթանումը, որոշումների կայացման թափանցիկության ապահովումը, անձնակազմի մտահոգությունները լսելու, քննարկումների և առաջարկությունների համար բաց հարթակ ձևավորելու պատրաստակամությունը, պարբերական հանդիպումների ձևաչափի քննարկումը, համատեղ ու թիմային աշխատանքը:

Հանդիպման ավարտին Մ. Մուրադյանը պատասխանել է ներկաներին հուզող հարցերին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում շարունակվում են ղեկավար կազմի հանդիպումները՝ ուղղված կրթական և գիտահետազոտական գործունեության զարգացման նոր ուղիների որոնմանը: Սույն թվականի մարտի 20-ին կայացած հերթական հանդիպումը նվիրված էր կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ստորաբաժանման կրթական գործընթացներում միջազգային համագործակցության հնարավորություններին և դրանց կիրառման ուղղություններին:



Քննարկման ընթացքում կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ. Մուրադյանը կարևորել է միջազգային համագործակցության դերը ինչպես աղետների ռիսկի կառավարման ոլորտում գիտելիքի և փորձի փոխանակման տեսանկյունից, այնպես էլ կրթական ծրագրերի արդիականացման ու ուսումնական մոդուլների ընդլայնման առումով: Հատուկ շեշտադրվել է միջազգային գործընկեր կառույցների հետ համակարգված համագործակցության միջոցով կրթահամալիրի ուսանողներին ժամանակակից, ոլորտային պահանջներին համապատասխան կրթական միջավայր ապահովելու անհրաժեշտությունը:

Հանդիպման բանախոսը՝ միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արմինե Հայրապետյանը, ներկայացրել է համաշխարհային կառույցների՝ աղետների ռիսկի նվազեցման և կառավարման ուղղությամբ իրականացվող ծրագրերի շրջանակները՝ ընդգծելով դրանց կիրառելիությունը Կրթահամալիրի ծրագրերում: Շեշտվել են համատեղ նախագծերին մասնակցելու, փորձի փոխանակման և կրթահամալիրի ներգրավման հնարավորությունները ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ ԵՄ հումանիտար և բնակչության պաշտպանության նախաձեռնությունների համատեքստում:

▶ 3

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՀԵՏ

2025 թվականի մարտի 13-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում մեկնարկել է նորաստեղծ ամբիոնների ուսումնական բեռնվածության բաշխման, առաջիկա ուսումնական և այլ բնույթի աշխատանքների պլանավորման, ինչպես նաև այլ կազմակերպչական հարցերով Կրթահամալիրի ղեկավարության և ամբիոնների պետերի հանդիպումների շարքը:

Մարտի 13-ին և 14-ին տեղի ունեցան Կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ.Մուրադյանի և պրոռեկտորների հանդիպումները փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման չորս ամբիոնների պետերի (պաշտոնակատարների) հետ:

Հանդիպումների ընթացքում ամբիոնների պետերը ներկայացրին նորաստեղծ ամբիոնների առաջիկա աշխատանքների կազմակերպման ուղղությամբ կատարված և նախատեսվող աշխատանքները, ուսումնական բեռնվածությունը պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների միջև բաշխելու առաջարկները:

Կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ.Մուրադյանն ամբիոնների պետերին տվեց կոնկրետ հանձնարարականներ՝ իրականացվելիք աշխատանքները համակարգված ձևով իրականացնելու, միմյանց և համակրթահամալիրային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցելու ուղղությամբ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ՀԵՏ

Փետրվարի 25-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ.Մուրադյանը խորհրդակցություն է անցկացրել կրթահամալիրի պրոռեկտորների, ուսումնական և ուսումնաօժանդակ ստորաբաժանումների պետերի հետ:

Նորաստեղծ Կրթահամալիրի բնականոն գործունեությունն ապահովելու, ոստիկանական և փրկարարական ուղղվածության կրթական ծրագրերի և վերապատրաստումների կազմակերպման միատեսակ մեթոդաբանություն մշակելու, ոստիկանության բարեփոխումների 2024-2026 թվականների ռազմավարությունից բխող՝ Կրթահամալիրին վերաբերող միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով կազմվել է 60-ից ավել իրավական ակտերի ցանկ, որոնք անհրաժեշտ է ընդունել մինչև ընթացիկ ուսումնական տարվա ավարտը:

Խորհրդակցության ընթացքում կատարվեց նշված իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների բաշխում, նախատեսվեցին կոնկրետ ժամկետներ և պատասխանատուներ, Կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ.Մուրադյանը տվեց կոնկրետ հանձնարարականներ՝ պլանավորված աշխատանքների պատշաճ և ժամանակին կատարումն ապահովելու նպատակով:

ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ ԵՆ «ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ» ԹԵՄԱՆԵՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների կողմից ԵՄ իրավապահ համակարգի վերապատրաստման գործակալության՝ CEPOL-ի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ՆԳՆ կրթահամալիրում մարտի 13-ին և 14-ին «Train-the-Trainers» սեմինարների ձևաչափով անցկացվել են «Կիբերհանցագործություն» և «Մարդկանց թրաֆիքինգ» թեմաներով դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ քննչական կոմիտեի ներկայացուցիչներ: Դասընթացը վարել են ՆԳՆ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ, որոնք CEPOL-ի ծրագրերով անցել են համապատասխան վերապատրաստում:

Ձեռք բերված փորձի տեղայնացման և փոխանակման նպատակով, տեսական նյութի մատուցումից բացի, ներկայացվել են կոնկրետ դեպքեր: Իրավապահ մարմինների՝ ՀՀ-ում կիբեռհանցագործությունների դեմ պայքարի շրջանակում ներկայացվել են «Կեղծ զանգերի կենտրոնների» բացահայտման ու դրանց հանցավոր գործունեությունը կասեցնելու համար ձեռնարկված գործողությունները:

Առավել ակտիվ են ընթացել «Մարդկանց թրաֆիքինգի» թեմային առնչվող՝ աշխատանքային, սեռական և երեխաների շահագործման դեպքերի քննարկումները:

Մասնակիցները ներկայացրել են մանրամասներ ՀՀ-ում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի իրականացման, ինչպես նաև դրական միտում արձանագրող վիճակագրական տվյալների մասին, կարևորել արտերկրի փորձի ուսումնասիրումն ու ընդգծել միջազգային վերապատրաստումների արդյունավետությունը, մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, թրաֆիքինգի ենթարկված անձանց հայտնաբերման, պաշտպանության և աջակցության հարցերով իրավապահ մարմինների և հանրության իրազեկվածությանն ու իրավագիտակցության բարձրացմանը նպաստող համատեղ փոխգործակցությունը:

Միջոցառման ավարտին CEPOL-ի ազգային մարմնի ներկայացուցիչ, ՆԳՆ կրթահամալիրի միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնի պետ Կարինե Սաֆարյանը տեղեկացրել է, որ, ըստ անհրաժեշտության, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի շրջանակում իրավապահ մարմինների կարողությունների հզորացմանը միտված նմանաբնույթ միջոցառումներ կազմակերպելիս հնարավոր է ստանալ CEPOL-ի նյութատեխնիկական օժանդակությունը:

Վերը նշված ձևաչափով եզրափակիչ դասընթացը կկայանա ս.թ. ապրիլի 10-ին՝ «Հրազենի ապօրինի շրջանառության դեմ պայքար» թեմայով:

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2025 թ. փետրվարի 20-21-ը ՀՀ ՆԳՆ պատվիրակությունը ճանաչողական այցով Նիդերլանդների Թագավորության Հաագա քաղաքում էր: Պատվիրակության կազմում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնի պետ Կարինե Սաֆարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության քրեաբանական վերլուծության և իրավապահ համագործակցության վարչության քրեաբանական վերլուծության բաժնի ՀԿԳ ավագ քրեական ոստիկան, ոստիկանության կապիտան Գոհար Հարությունյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության օպերատիվ տեղեկատվության ապահովման վարչության օպերատիվ-հետախուզական տեղեկատվության մշակման և կանխատեսման բաժնի ավագ քրեական ոստիկան, ոստիկանության կապիտան Նարե Հովհաննիսյանը:

Ճանաչողական այցը կազմակերպվել էր ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերապատրաստում և օպերատիվ համագործակցություն» ծրագրի (TOPCOP) 3-րդ բաղադրիչի (հանցավորության սպառնալիքների գնահատում և հատուկ աջակցություն) շրջանակում: Մասնակցում էին Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Ուկրաինայի և Ադրբեջանի պատվիրակությունները:

Առաջին օրը Եվրոպոլի Միասնական օպերատիվ ծառայությունների բաժնի աշխատակիցները ներկայացրին ԵՄ SIS (Շենգենյան տեղեկատվական համակարգ), ETIAS (Եվրոպական ճանապարհորդական տեղեկատվության և թույլտվության համակարգ), EES (Մուտք և ելք) և VIS (վիզաների տեղեկատվական համակարգ) համակարգերը, ավիաընկերությունների կողմից ուղևորների վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվությունը շահագրգիռ իրավապահ մարմիններին տրամադրելու դեպքերը, կարգն ու պայմանները: Հաջորդիվ Մոլդովայի պատվիրակը ներկայացրեց Մոլդովայի սահմանապահ ոստիկանության կազմում բոլորովին վերջերս ստեղծված Ուղևորների տեղեկատվական ստորաբաժանումը (PIU), դրա կառուցվածքն ու գործառույթները:

Երկրորդ օրը մասնակիցներն այցելեցին Հաագայի մարզային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն: Ներկայացվեց օպերատիվ կառավարման կենտրոնի կառուցվածքը, գործառույթները, աշխատանքների մեթոդաբանությունը, օպերատորներին ներկայացվող պահանջներն ու անհրաժեշտ հմտությունները: Մասնակիցները հնարավորություն ունեցան տեղում հետևելու օպերատիվ կառավարման կենտրոնում այդ պահին աշխատող ոստիկանության, հրշեջ և շտապօգնության ծառայության օպերատորների աշխատանքին:

Այնուհետև մասնակիցներն ուղևորվեցին Ամստերդամի Սխիպոլ օդանավակայան, որտեղ տեղակայված է Ուղևորների տեղեկատվության ստորաբաժանումը: Այն անկախ մարմին է՝ կազմված ազգային ոստիկանության, պաշտպանության նախարարության և ֆինանսական հետաքննությունների ծառայության ներկայացուցիչներից:

Ներկայացվեցին այն իրավական ակտերը՝ համաձայն որոնց ավիաընկերությունները պարտավոր են ուղևորների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել վերը նշված ստորաբաժանմանը: Իրական դեպքերի օրինակներով ներկայացվեցին բաժնի գործառույթներն ու լիազորությունների շրջանակը:

Հնադիպումներն ամփոփվեցին ակտիվ քննարկումների մթնոլորտում:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Մարտի 8-ը տոնացույցում ամենասպասված և հատկապես մեր մայրերի, կանանց ու աղջիկների նկատմամբ անսահման երախտիքի զգացումներ առաջացնող տոներից մեկն է, որը տարիներ շարունակ մեծ ոգևորությամբ են տոնում աշխարհի տարբեր երկրներում:

Գարնան գալուստն ու կանանց տոները խորհրդանշում են կյանքի հավերժությունն ու անսահման գեղեցկությունը, բնության զարթոնքն ու սերը:

Հայ կինը միշտ եղել է ազգապահպանության երաշխավորն ու մեր ազգային լավագույն ավանդույթների կրողը, հաղթահարելով բազում դժվարություններ՝ նվիրումով մասնակցել է պետական և հասարակական կյանքին:

Անկախ դիրքից և ճանաչված լինելու աստիճանից՝ հայ կինն առաջին հերթին մայր է՝ հավատարիմ իր ընտանիքին ու բոլոր սրբություններին:

Այսօր հայ կինը լուրջ դերակատարություն ունի երկրի կառուցման, քաղաքացիական հասարակության կառուցման, իրավունքների, հատկապես՝ կանանց իրավունքների պաշտպանության հարցում:

Մեր երկրում չկա որևէ ոլորտ ու բնագավառ, որտեղ չզգացվի կանանց բարենպաստ ներկայությունը և ակտիվ մասնակցությունը: Նրանք ուսուցիչ են, բժիշկ, ձեռներեց ու պետական գործիչ, զինվորի մայր են ու զինվորական: Մեր ողջ հասարակության անունից գլուխ ենք խոնարհում ձեր առջև, սիրելի՛ կանայք, խոնարհվում ենք բազմաթիվ որդեկորույս մայրերի առաջ, ում որդիներն իրենց կյանքը տվեցին հանուն հայրենիքի: Նրանցից շատերը նոր կյանք ու հույս են տալիս բոլորիս, սուգը հաղթահարելով՝ մայրության բերկրանքը կրկին ապրելու և իրենց նահատակված զավակներին այսպիսով հարություն տալու միջոցով, պատերազմում այրիացած մեր այն կանանց առաջ, ովքեր իրենց ուսերին են պահում գլխատված ընտանիքների հոգսի ծանրությունը և իրենց զավակներին կոչում են ապրելու, կրթվելու, հաղթահարելու բոլոր դժվարությունները ու հաղթելու ճակատագրի մարտերում:

Գլուխ ենք խոնարհում այն կանանց առաջ, ովքեր ամուր թիկունք ու ապավեն են զինված ուժերում ծառայող իրենց ամուսիններին, ովքեր երկրի, պետության անվտանգության պատասխանատվությունն են կրում, ովքեր իրենք են ծառայում Զինված ուժերում:

Մեր երկիրն այսօր դժվարություններ է կրում, դեռ հաղթահարված չեն պատերազմի ծանր հետևանքները, և շատ հոգսեր ծանրացած են կանանց ուսերին, ովքեր համբերությամբ, նախանձախնդրությամբ և արիությամբ հանձնառու են իրենց առաքելությանը՝ հայրենիքին տալ այնպիսի սերունդ, որ հասակ առնի ջերմ հավատքով, ազգասեր ու հայրենասեր ոգով, զորանա հույսը ապագայի հանդեպ, որպեսզի անխոչընդոտ լինի մեր ժողովրդի վերելքի ուղին: Թող ձեր կյանքի և համայն մեր ժողովրդի ուղեկիցները լինեն խաղաղությունն ու բարօրությունը:

Այս գարնանային գեղեցիկ տոնի կապակցությամբ մաղթում ենք Ձեզ ընտանեկան երջանկություն, անսահման սեր և ջերմություն, խաղաղ երկնքի տակ ստեղծելու և արարելու անսպառ եռանդ ու բոլոր երազանքների իրականացում:

Եղե՛ք միշտ ուրախ, հմայիչ ու գեղեցիկ, շրջապատված անսպառ ուշադրությամբ ու հոգատարությամբ, և թող բարին ու բնության զարթոնքը հովանի լինեն ձեզ և ձեր ընտանիքներին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

1 ◀ Քննարկման ընթացքում նշվել է, որ նման համագործակցությունը կարող է նպաստել ոչ միայն դասավանդման մեթոդաբանության արդիականացմանը, այլև գիտահետազոտական ծրագրերի մշակմանն ու միջազգային հետազոտական ցանցերում ներգրավմանը: Մասնակիցները բարձրաձայնել են կրթահամալիրի կարողությունները՝ միտված հետազոտական գործունեության ընդլայնմանը, ինչպես նաև միջազգային վարժանքների և վերապատրաստումների միջոցով ուսումնական գործընթացի ամրապնդմանը:

Հանդիպման ավարտին կարևորվել է շարունակական համագործակցությունը միջազգային կառույցների հետ՝ կրթահամալիրի ռազմավարական նպատակներին համահունչ կապերի խորացման, գիտակրթական միջավայրի ինտեգրման և արդիականացման նպատակով: Առաջարկվել է նաև ձևավորել մշտական համագործակցային հարթակ՝ միջազգային լավագույն փորձի ներգրավման և կիրառման համակարգված զարգացման համար:

ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՉ ԹԵ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Այն մարդիկ, ովքեր անընդհատ գարուններ են ստեղծում իրենց հոգում ու սրտում, նրանք միշտ գարնան պես պայծառ են, կենսուրախ ու խանդավառ: Այս խոսքերով կարելի է բնութագրել Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական առարկաների ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գալինա Ռուսակովային, ով իր մանկավարժական ողջ ձիրքն ու կարողություններն անձնուրաց նվիրումով շռայլում է ապագան կերտող հայ ուսանողներին դաստիարակելու, գիտելիքներով զինելու համար:

Այս անգամ մանկավարժության էության, դերի և մեթոդների մասին զրուցել ենք տիկին Ռուսակովայի հետ:

- Բարև Ձեզ, տիկի՛ն Ռուսակովա, ի՞նչը Ձեզ դրդեց մանկավարժ դառնալ: Ամենաբարդ մասնագիտությունը բժշկությունն ու մանկավարժությունն է. մեկը բուժում է մարմինը, մյուսը՝ հոգին: Երկուսն էլ ճակատագրական են: Դուք գիտակցու՞մ էիք այդ առաքելությունն ստանձնելու բարդությունը:

- Բարև Ձեզ, նախ ասեմ, որ կան մասնագիտություններ, որոնց վրա շատ մեծ պատասխանատվություն է դրված, դասախոսն իրավունք չունի չսիրել իր գործը, քանի որ նրա ձեռքում է մեր ապագան: Դեռ մանկուց տատիկս ինձ համար եղել է օրինակ, և ես շարունակեցի նրա գործը, ով 50 տարի աշխատել է դպրոցում և ստացել ՌԴ վաստակավոր ուսուցչի կոչում: Հենց նա է ինձ բերել այս մասնագիտությանը:

- Կհիշե՞ք Ձեր առաջին մուտքը լսարան:

- Երբ առաջին անգամ հուզախառն պատասխանատվության զգացողությամբ մտա լսարան, ես հասկացա, որ ստանձնել եմ ոչ միայն ուսանողների հետ մեր համատեղ աշխատանքի հաջողությունը, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները փոխանցելու պատասխանատվությունը, այլև կարող եմ զբաղվել հենց այն գործով, ինչ նախատեսված է ինձ համար ճակատագրով: Գիտակցելով իմ առաքելությունը՝ ես հասկացա, որ հաջողության հասնելու համար պետք է կարողանամ բացահայտել նրանց ներուժը, ոգեշնչել, բացահայտել նրանց տաղանդները: Այսպիսով, սկսվեց մի նոր փուլ, որում ես ոչ միայն դասավանդում եմ, այլև սովորում եմ իմ սիրելի ուսանողներից: Ուսանողը ոչ թե անոթ է, որը պետք է լցվի, այլ ջահ, որը պետք է բոցավառել: Եվ դա կարող է անել միայն նա, ով ինքն է այրվում:

- Ունե՞ք ծույլ ուսանողներին դասին ներգրավելու Ձեր առանձնահատուկ մեթոդները:

- Իսկական մանկավարժն իրապես ոչ թե նա է, ով անընդհատ դաստիարակում է, այլ նա, ով օգնում է ինքնուրույն մտածել և գործել: Մենք պետք է օգնենք ուսանողներին տեսնել իրենց ներուժը, իրենց տաղանդներն ու հնարավորությունները, գտնել իրենց «իգիկայը»՝ կյանքի իրական նպատակը:

- Ինչպե՞ս պետք է լինի ուսանող - դասախոս հարաբերությունը:

- Իդեալականին մոտ հարաբերությունները կառուցված են փոխադարձ հարգանքի, վստահության և անկեղծության վրա: Դասախոսն ստեղծում է միջավայր, որտեղ սխալներն առաջադիմության մի մասն են, իսկ հարցերը՝ հասկանալու ճանապարհ: Ուսանողներն զգում են աջակցություն և ոգեշնչում, ինչը թույլ է տալիս նրանց վստահելու իրենց ներուժին: Հիմնական սկզբունքներն են՝ երկխոսությունը, ոչ թե մենախոսությունը, անհատական մոտեցումը, ոչ թե կաղապարները, համագործակցությունը, ոչ թե ավտորիտարիզմը:

- Լսարան պահելը շատ դժվար է. լավ մասնագետ լինելը դեռ բավարար չէ դասը լսելի դարձնելու և առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար: Կասե՞ք՝ ո՞րն է Ձեր գաղտնիքը, և ինչպե՞ս եք մոտիվացնում ուսանողներին:

- Հաջողված դասի գաղտնիքը երեք բաղադրիչների ներդաշնակության մեջ է՝

* բանիմաց և փորձառու դասախոսը կատալիզատոր է, որն սկսում է ճանաչողության գործընթացը,
* ուսանողի ներգրավվածությունը. յուրաքանչյուր ուսանող պետք է իրեն կարևոր և անհրաժեշտ զգա,
* բովանդակության արդիականությունը՝ գիտելիքները, որոնք կարող են կիրառվել գործնականում, երկար ժամանակ մնում են հիշողության մեջ:

- Որո՞նք են Ձեր ուժեղ և թույլ կողմերը:

- Քանի դեռ մարդը չի հանձնվում, նա ավելի ուժեղ է, քան իր ճակատագիրը: Ես սիրում եմ կյանքը և երախտագիտությամբ եմ ընդունում այն ամենը, ինչ այն տալիս է ինձ:

- Պատմեք Ձեր կյանքի գլխավոր ձեռքբերման մասին:

- Կյանքը դինամիկա է, անընդհատ շարժում է, և ոչ մի ձեռքբերում ինձ համար վերջինը չէ, ընդհակառակը, դա ինձ համար հետագա զարգացման խթան է:

- Ի՞նչը կփոխեիք կրթական համակարգում:

- Իմ կարծիքով, պետք է ձգտել ստեղծել համակարգ, որը մարդկանց պատրաստում է ոչ միայն քննու- ▶ 4

ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՉ ԹԵ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

3 ◀ թյունների, այլև կյանքի համար, զարգացնում է ներդրված ներուժը, սովորեցնում է մտածել ոչ ստանդարտ և ինքնուրույն որոշումներ կայացնել:

- Ինչպե՞ս կգնահատեք այսօրվա սերնդին:

Հրաշալի սերունդ է, որը մեզանից շատ բան կարող է սովորել, իսկ մենք էլ մեր հերթին շատ բան կարող ենք սովորել իրենցից:

- Ձեր մանկավարժական երկար տարիների փորձից ինչ՞ կցանկանաք փոխանցել ուսանողներին:

Մի՛ վախեցեք ինչ-որ բան փոխել ձեր կյանքում, եթե ձեր սիրտն ու հոգին ցանկանում են դա: Հակառակ դեպքում, դուք ստիպված կլինեք ապրել՝ դավաճանելով և՛ սրտին, և՛ հոգուն:

- Ի՞նչ եք կարծում, մանկավարժին ստաժն է մանկավարժ դարձնու՞մ, թե՞ մանկավարժ ծնվում են:

- Իմ կարծիքով՝ պետք է մանկավարժ ծնվել:

- Ըստ Ձեզ՝ կա՞ն վատ գրքեր:

- Ցավոք, կան գրքեր, որոնք սովորեցնում են, թե ինչպես խաբել կամ օգտագործել այլ մարդկանց: Նման գրքերը հանցագործություն են:

- Ձեր ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը, և դրանցից ո՞ր գիրքը կրկին կընթերցեիք:

- Ռեմարկ, «Երեք ընկեր»:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով Ձեզ կտրում է իրական կյանքից:

- Լավ գիրքը, լավ երաժշտությունը, հետաքրքիր զրուցակիցը:

- Ինչպիսի՞ն պետք է լինի իրական ուսուցիչի կերպարը:

- Նա պետք է սիրի իր մասնագիտությունը, լինի իսկական պրոֆեսիոնալ, մնա մարդ:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսեք:

- Կյանքը. այն մատնահետքերի պես յուրաքանչյուրի համար յուրօրինակ է և հետաքրքիր:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը Ձեզ համար:

- Շարժումը կյանք է: Ամեն նոր օր նոր կյանք է, նոր հնարավորություններ, նոր ձեռքբերումներ:

Բլից հարցեր
Պատասխանում եք կարճ և արագ:

- Ինչպե՞ս կբնորոշեք Ձեզ:

- Ես երջանիկ մարդ եմ, ամեն ինչում հասել եմ լիակատար ներդաշնակության:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ողջո՛ւյն, նո՛ր օր:

- Օրն սկսում եք ժամը...

- 5:30-ին:

- Սիրած աֆորիզմը:

- Քանի դեռ մարդը չի հանձնվում, նա ավելի ուժեղ է, քան իր ճակատագիրը:

- Սիրելի զբաղմունքը:

- Ճամփորդություն:

- Խորհուրդ, որը կտայիք:

- Հավատացե՛ք ինքներդ ձեզ:

- Իսկ վերջում... (ավելացրե՛ք այն, ինչ Ձեր մտքով անցնում է այս պահին):

- Երբ հաղթահարեք ձեր վախերը, դուք կշահեք այս կյանքը:

Հարցազրույցը վարեց
Լիանա Սահակյանը

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՊԱՏՎՈՎ ՃԱՌԱՅԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ես Մարիամն եմ, ով դպրոցն ավարտելուց հետո իր քայլերն ուղղեց դեպի նոր կյանք՝ ընտրելով բավականին պատասխանատու և պատվաբեր մասնագիտություն: Դեռ մանկուց սիրել եմ ոստիկանի աշխատանքը. իմ երազանքն է եղել կրել ոստիկանի համազգեստ և դառնալ օրինակելի ոստիկան: Բնույթով պայքարող եմ, մշտապես հակում եմ ունեցել պայքարել արդարության համար, որ խարդախություններ, գողություններ, սպանություններ և նմանատիպ այլ բաներ տեղի չունենան իմ հայրենիքում, իսկ եթե տեղի են ունենում, գոնե բարցրաձայնվի կատարվածի մասին, բացահայտվի, և մեղավորները պատժվեն: Ես գիտակցում եմ, որ ընտրել եմ բավական բարդ և վտանգավոր մասնագիտություն, սակայն ինձ համար մեծ պատիվ է ծառայել իմ ժողովրդին, ազգին, բոլորի համար ապահովել օրենքի նույն պայմանները, այնպես անել, որ իրոք կարողանամ ապացուցել, որ օրենքը հավասար է բոլորի համար, և որ դրանք զուր խոսքեր չեն: Ունենալով այս երազանքները, որոնց իրականացման համար հստակ նպատակներ եմ դրել, ջանք ու եռանդ չեմ խնայում, հուսամ՝ մի օր կիրականանան, և կարդարացնեմ բոլորի սպասելիքները:

Մարիամ Հարոյան
քոլեջ, 1-ին կուրս

ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵՇԵՐԸ

Հարգելի՛ տղամարդիկ, երբ նայում եք օտար կնոջ, միշտ հիշե՛ք, որ ձեր կինն էլ ուրիշի համար է օտար:

***

Պնդել այն գաղափարը, որ անհնար է ողջ կյանքում սիրել միևնույն կնոջը, նույնքան անմիտ է, որքան ենթադրել, որ տարբեր մեղեդիներ նվագելու համար երաժշտին տարբեր ջութակներ են հարկավոր:

***

Խանդի համար ամեն ինչ պարզ է, բայց ապացույցներ չկան:

***

Խանդի մեջ մեկ բաժինը սեր է, իսկ 99-ը՝ ինքնասիրություն:

***

Խանդը սեփականության զգացումի տարատեսակ է:

***

Ով սեր չի ճաշակել, նա, միևնույն է, չի ապրել:

***

Այն կինը, որը ջանում է նմանվել տղամարդու, նույնքան այլանդակ է, որքան կանացի տղամարդը:

***

Սերն ունի իր զարգացման օրենքները, իր տարիները, ինչպես մարդկային կյանքը, նա ունի իր ճոխ գարունը, իր շոգ ամառը, վերջապես՝ աշունը, որը ոմանց համար լինում է տաք, պայծառ ու արևոտ, ուրիշների համար՝ սառը, խոնավ, անպտուղ:

***

Սիրո համար բաժանումը նույնն է, ինչ քամին կրակի համար. թույլերին նա հանգցնում է, ուժեղներին՝ բորբոքում:

***

Երբ սիրում ես, կորցնում ես տեսողությունդ:

***

Գեղեցկությունը թագուհի է, որը կառավարում է շատ կարճ ժամանակ:

***

Գեղեցիկ տգետը փետուրներով զարդարված թութակ է:

***

Կանայք ատելության մեջ ավելի հաստատամիտ են, քան սիրո:

Ստեղծագործում են մերոնք

ԵՍ ԵՐՋԱՆԻԿ ԵՄ

Ես երջանիկ եմ,
որ ձայնում եմ՝ մա՛մ,
Ու պատասխանում ես
այնքան հաճելի:
Ես երջանիկ եմ,
որ հոգնած մարմնիս
Քո մի համբույրով նոր ուժ
ես տալիս:
Ես երջանիկ եմ, որ բոլորից զատ,
Դու հավատում ես իմ ապագային:
Ես երջանիկ եմ, որ քո խոսքերով
Ինձ դնում ես միշտ ճիշտ ճանապարհի:
Եվ երջանիկ եմ այն բանի համար,
Որ այս աշխարհին թե տիրի քաոս,
Ես, քո ջերմ գրկում հանգրվան գտած,
Պիտի խոր քնեմ հանգիստ, ապահով:

ԻՄ ՁԵՌՔԵՐՈՎ

Բարձրացա ու նորից ընկա,
Մի մշուշ պատեց ինձ նորից,
Նորից չիմացա՝ ուր ընկավ,
Այդ սերն իմ փոքրիկ ձեռքերից:

Պատճառը փոքրիկ ձեռքերս չէր,
Պատճառը հոգին էր քո փոքրիկ,
Բայց հիմարս, արդարացնելով քեզ,
Պատճառ եմ բերում ձեռքերս նորից:

Ավելի լավ է ձեռքիցս գցել,
Քան գիտակցել քո փոքր հոգին,
Քո փոքր հոգին կործանեց մի սեր,
Իմ փոքրիկ ձեռքերն անզոր են կրկին:

Վիկտորյա Մարգարյան
իրավագիտության ֆակուլտետի
շրջանավարտ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Մարկի առջև դրեցին 3 անոթ, դրանցից յուրաքանչյուրի հատակում կա 1 կգ ոսկի, բայց առաջին անոթում կան մի քանի թունավոր օձեր, երկրորդում առկա է նյութ, որը կարող է մահացու լինել ցանկացած կենդանի էակի համար, իսկ երրորդում եռման ջուր է: Մարկը կարող է ընտրել միայն մեկ անոթ և դրա միջից հանել ոսկին, դրա հետ մեկտեղ, նա կարող է օգտագործել միայն իր ձեռքերը, թե ո՞ր անոթը պետք է ընտրի, Մարկը մտածելու համար կարող է վերցնել անսահմանափակ ժամանակ:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30.03. 2025թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան